# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*01 փետրվարի 2021 թվականի   N 33*

*ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների 2021թ. ամենամյա արձակուրդների գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*   *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. փետրվարի 01
ք.Եղեգնաձոր

Հավելված
Եղեգնաձորի համայնքի ղեկավարի
01 փետրվարի 2021թ. թիվ 33 որոշման

# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ

| հ/հ | Պաշտոն | Ազգանուն,անուն | արձակուրդի ժամանակահատվածը |
|---|---|---|---|
| 1) | համայնքի ղեկավարի տեղակալ | Ավագյան Վարդան | հուլիս |
| 2) | աշխատակազմի քարտուղար | Սարգսյան Անժելա | հուլիս |
| 3) | ֆինանսական բաժնի պետ | Հարությունյան Աշոտ | հոկտեմբեր |
| 4) | ներքին աուդիտի բաժնի պետ | Հովհաննիսյան Արմեն | նոյեմբեր |
| 5) | ՔԿԱԳ տարածքային բաժնի պետ | Սարդարյան Աննա | հուլիս |
| 6) | համայնքի ղեկավարի օգնական | Թադևոսյան Սիրակ | մայիս |
| 7) | համայնքի ղեկավարի օգնական | Գրիգորյան Անի | փետրվար , հուլիս |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*02 փետրվարի 2021 թվականի N 34*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հանգուցյալ Սարգիս Արգամի Սարգսյանին և համասեփականատերեր Անահիտ Վաղարշակի Հարությունյանին, Կարեն Սարգսի Սարգսյանին, Կարինե Սարգսի Սարգսյանին, Հերմինե Սարգսի Սարգսյանին, Լուսինե Սարգսի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1693012 վկայական) բնակելի տան և տնամերձի՝ ք. Եղեգնաձոր, Մաշտոցի թիվ 7 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Մաշտոցի փողոց տուն 8:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. փետրվարի 02
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 փետրվարի 2021 թվականի N 35

### ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԶՎԱՐՃԱՆՔԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻՆ (ՍԱՈՒՆԱՆԵՐԻՆ), ԽԱՂԱՏՆԵՐԻՆ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 45 -րդ հոդվածի 1-մասի 5-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի գ) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 25.12.2020թ. թիվ 103 - Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. <<Գուդվին-բետ>> ՍՊԸ-ին տալ համայնքի Սևակի փողոց 4/6-4/7-4/8-4/9 հասցեում վիճակախաղի կազմակերպման համար տալ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. փետրվարի 02
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

## *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԶՎԱՐՃԱՆՔԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ, ԽԱՂԱՏՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՂՆԻՔՆԵՐԻՆ (ՍԱՈՒՆԱՆԵՐԻՆ), ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ*
*N ժ24:00-Թ- 01*

Տրված՝ ***02 փետրվար 2021թ.***

24.00-ից հետո աշխատելու թույլատրված գործունեության անվանումը՝
*Վիճակախաղերի կազմակերպման համար:*

Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*,,ԳՈՒԴՎԻՆ-ԲԵՏ'' ՍՊԸ , Ք.Երևան Արշակունյաց պողոտա 67, ՀՎՀՀ՝ 06945224:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ *ք.Եղեգնաձոր, Սևակի փողոց 4/6-4/7-4/8-49:*

Շինության տեսակը՝***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝*01 հունվար 2021-ից մինչև 31 դեկտեմբեր 2021-ը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 փետրվարի 2021 թվականի N 36*

## *ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ն մասի 7-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 103-Ն որոշումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Թերեզիկ Կարապետյանին Նարեկացի փողոց թիվ 1/2 հասցեում գտնվող առևտրի սրահում վաճառելու թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. փետրվարի 03
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐի ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 01*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ*
*ՈՐՈՇԱԿԻ ՎԱՅՐՈՒՄ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ*

Տրված՝ *03 փետրվար 2021թ.*

Թույլատրված գործունեության անվանումը՝ *Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*ԹԵՐԵԶԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, Արսենյան Փ. , 9 , 34, ՀՎՀՀ՝ 76813245:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ *Նարեկացի 1/2:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2021-ից մինչև 31 դեկտեմբեր 2021-ը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 փետրվարի 2021 թվականի N 37

ԳԱՐՈՒՇ ԳԱԳԻԿԻ ԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ն մասի 24-րդ կետի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի գ) և 49-րդ հոդվածի 4-րդ մասի կետի դրույթներով, հաշվի առնելով որ 15.01.2021թ.-ին Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի թիվ 82-184 գրության և դրան կից զեկուցագրի և արձանագրության համապատասխան, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և 2-րդ մասի դրույթներին համապատասխան վարչական վարույթ է հարուցվել Գարուշ Գագիկի Եղյանի նկատմամբ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով և 20.01.2021թ.-ին Գ. Եղյանին, Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի կողմից ներկայացված ռեգիստրի տվյալներով, ուղարկված համապատասխան ծանուցագիրը ետ է վերադարձվել <<Տեղափոխված>> նշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել վարչական վարույթը՝ մինչև կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. փետրվարի 03
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

*04 փետրվարի 2021 թվականի N 38*

## *ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 29-րդ կետերի և 41-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել <<ՀՀ ոստիկանության քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքային ծառայության քաղաքացիական պաշտպանության>> պլանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. փետրվարի 04
ք.Եղեգնաձոր